ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » հունիսի 2014 թվականի № 9-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» № 32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 13-ի «Համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին» № 32-Ն որոշման մեջ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները:

1.Համայնքի վարչական բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 1 471. 3 հազար դրամով:

2.Վարչական բյուջեի ծախսային մասում 1 471. 3 հազար դրամն ուղղել բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «պահուստային ֆոնդի» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածին:

3.Վարչական բյուջեի ծախսային մասում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «պահուստային ֆոնդի» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածից պակասեցնել 900.0 հազար դրամ և ուղղել ֆոնդային բյուջե:

4. Ֆոնդային բյուջեի՝

1) եկամտային մասն ավելացնել 900.0 հազար դրամով,

2) ծախսային մասում՝ 900.0 հազար դրամն ուղղել «Օրենսդիր և գործադիր մարմիներ, պետական կառավարում» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.1.1 ծրագրի «Վարչական սարքավորումներ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածին:

Կողմ(4) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ